



with financial support of the
Russian Federation



Empowered lives.
Resilient nations.

**«Եվրասիական տնտեսական միության երկրներում Էներգիայի
արդյունավետության խթանման կարգավորող շրջանակ» ՄԱԶԾ-ՌԹՅ
տարածաշրջանային ծրագիր**

Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան

բնագավառի կարգավորման դաշտը ԵՄ-ում

**«Կենցաղային գազի սարքերի Էներգաարդյունավետության
նվազագույն ստանդարտների և պիտակավորման կարգավորող
շրջանակների ներդրում» աշխատաժողով**

Սուրեն Գյուրջինյան, տարածաշրջանային ծրագրի ղեկավար

«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն

Երևան, 19 ապրիլի 2018 թ.

Գազի սարքերի նվազագույն էներգաարդյունավետության սահմանման ԵՄ կարգավորող դաշտը (1)

Էներգիա սպառող արտադրանքի Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները սահմանող Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009թ. հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՅ հրահանգ (Eco-Design Directive)

Սահմանում է Էկոնախագծման ընդհանուր խաղի կանոնները կարգավորման շրջանակներում ներառված սարքավորումների խմբերի համար, այն է.

- Շուկայահանման և գործարկման պահանջները,
- Շուկայի մասնակիցների պատասխանատվության շրջանակները,
- Համապատասխանության գնահատումը և CE մակնշումը,
- Ներդաշնակեցված ստանդարտների վերաբերյալ պահանջները,
- Սարքերի՝ կարգավորման շրջանակներում ընգրկվելու նախապայմանները, չափորոշիչները և պահանջները:

Գազի սարքերի նվազագույն էներգաարդյունավետության սահմանման ԵՄ կարգավորող դաշտը (2)

Էկոնախազժման հրահանգը կիրարկող կարգավորումներ գազի սարքավորումների մասով՝

- ✓ «Սենքի տաքացուցիչների և համակցված տաքացուցիչների Էկոնախազժմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009/125/ԵՅ հրահանգը կիրարկող՝ Ջանձնաժողովի 2013թ. օգոստոսի 2-ի թիվ 813/2013 կանոնակարգ (ԵՄ),

Վերաբերում է **400 կՎտ-ից ցածր** ջերմային հզորությամբ էլեկտրական և գազի միակոնտուր և երկկոնտուր կաթսաներին, կոգեներացիոն տեղակայանքներին, ինչպես նաև ջերմային պոմպով համալրված միակոնտուր և երկկոնտուր կաթսաներին

- ✓ «Զրատաքացուցիչների և ունակային ջրատաքացուցիչների Էկոնախազժմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009/125/ԵՅ հրահանգը կիրարկող՝ Ջանձնաժողովի 2013թ. օգոստոսի 2-ի թիվ 814/2013 կանոնակարգ (ԵՄ)

Վերաբերում է **400 կՎտ-ից ցածր** ջերմային հզորությամբ էլեկտրական, գազային և հեղուկ վառելիքով աշխատող հոսանուտային և ունակային ջրատաքացուցիչներին, այդ թվում նաև արևային ջրատաքացուցիչներին

Գազի սարքերի նվազագույն էներգաարդյունավետության սահմանման ԵՄ կարգավորող դաշտը (3)

«Սենքի տեղային տաքացուցիչների Էկոնախազձմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՅ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2015 թ. ապրիլի 28-ի թիվ 2015/1188 կանոնակարգ (ԵՄ)

Վերաբերում է *50 կՎտ-ից ցածր* նոմինալ հզորությամբ կենցաղային և *120 կՎտ-ից ցածր ջերմային հզորությամբ առևտրային*՝ գազով, հեղուկ վառելիքով և էլեկտրական էներգիայով աշխատող սենքի տեղային ջեռուցիչներին:

Էկոնախազձման պահանջները ներառում են՝

- Ջեռուցման էներգաարդյունավետության պահանջները,
- Տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության պահանջները,
- Ձայնային հզորության մակարդակը,
- Ազոտի օքսիդների արտանետումների պահանջները,
- Արտադրանքի վերաբերյալ տեղեկատվության նկատմամբ պահանջներ:

Գազի սարքերի Էներգապիտակավորման վերաբերյալ ԵՄ կարգավորող դաշտ

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2017թ. հունիսի 4-ի 2017/1369 հրահանգ Էներգապիտակավորման շրջանակները սահմանելու և 2010/30/ԵՄ հրահանգը ուժը կորցրած ճանաչելու մասին

Սահմանում է Էներգապիտակավորման ընդհանուր կարգավորող շրջանակը ընդգրկելով հետևյալ իրավակարգավորումները

- Մատակարարների պարտավորությունները,
- Շուկայի վերահսկողության գործառնությունները,
- Էներգապիտակների ներդրման և Էներգաարդյունավետության դասերի վերասահմանման ընթացակարգերը,
- Շուկայահանվող՝ Էներգապիտակավորման ենթակա արտադրանքի տվյալների շտեմարանի ստեղծման պահանջները

Էներգապիտակավորման կարգավորումը չի նախատեսում համապատասխանության գնահատում

Գազի սարքերի Էներգապիտակավորման վերաբերյալ ԵՄ կարգավորող դաշտ (1)


«Սենքի տաքացուցիչների, համակցված տաքացուցիչների, սենքի տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման և արևային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների, ինչպես նաև համակցված տաքացուցիչ, ջերմաստիճանի կարգավորման և արևային սարքերից բաղկացած համալիր սարքավորումների Էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի ԵԼ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Յանձնաժողովի 2013 թ. փետրվարի 18-ի թիվ 811/2013 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ)

Վերաբերում է միակոնտուր և երկկոնտուր գազի կաթսաներին այդ թվում նաև համալրված արևային Էներգիայի սարքվածքներով

Էներգաարդյունավետության դասերը սահմանվում են ըստ՝

- ջեռուցման սեզոնային Էներգաարդյունավետության ցուցանիշի (ջեռուցման կոնտուր),
- տաք ջրամատակարարման Էներգաարդյունավետության ցուցանիշի (տաք ջրամատակարարման կոնտուր)

Երկրորդական կաթսայի էներգետիկ պիտակը




Գազի սարքերի Էներգապիտակավորման վերաբերյալ ԵՄ կարգավորող դաշտ (2)

«Ջրատաքացուցիչների, ունակային ջրատաքացուցիչների եւ ջրատաքացուցիչից ու արեւային սարքից բաղկացած համալիր սարքավորումների Էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Չանձնաժողովի 2013 թ. փետրվարի 18-ի թիվ 812/2013 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ)

Վերաբերում է ունակային և հոսանուտային ջրատաքացուցիչներին , այդ թվում նաև համալրված արևային ջրատաքացուցիչներով

Էներգաարդյունավետության դասերը սահմանվում են ըստ տաք ջրամատակարարման Էներգաարդյունավետության ցուցանիշի

Ջրատաքացուցիչի էներգետիկ պիտակը




Գազի սարքերի էներգապիտակավորման վերաբերյալ ԵՄ կարգավորող դաշտ (3)

«Սենքի տեղային տաքացուցիչների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Յանձնաժողովի 2015թ. ապրիլի 24-ի թիվ 2015/1186 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ)

Վերաբերում է սենքի տեղային ջեռուցիչներին

Էներգաարդյունավետության դասերը սահմանվում են ըստ էներգաարդյունավետության ցուցիչի (գործակցի)

Սենքի տեղային ջեռուցիչի էներգետիկ պիտակը



- **ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**